ԱՐԹԱՐ ԿՆԻԿՆ ՈՒ ՀԱԼԱԼ ԶԱՎԱԿԸ / Հայ ժողովրդական հեքիաթներ, Հատոր VIII / Գուգարք (Լոռի), Լոռու բարբառ (խոսվածք)

Ըլըմ ա, չի ըլըմ մի մարթ, մի կնիկ։ Մի իրեք խորթ ախչիկ են ունենըմ, կարըմ չեն պահեն։ Մարթը գնըմ ա տենըմ մի խնձորի ծառ, վրիցը խնձոր ա քաղըմ, բերըմ ա տուն։ Ըրեխեքն իրար ձեռից խլըմ են, ուտըմ։
Ասըմ են.— Հայրիկ ջան, էս որդիա՞ն ես բերել։
Ասըմ ա.— Վախիլ մեք, ըռավոդը ձեզ կտանիմ ծառի տակը, թափ կտամ, կուտեք։
Կնիկն ասըմ ա.— Մենք սոված մնացինք, մեր ձեռիցը խլեցին՝ կերան, տար դրանց մի ֆոր փորե, մեչն ածա, էն խնձորնին էլ մենք կուտենք։
Էնա ըռավոդը մի ձունձ ա վի ունըմ, ծերքին գնըմ ա ծառի տակին մի ֆոր փորըմ, ձունձը վրեն փռըմ, ըրեխեքը գալիս են, ինքը ծառին վեր ա ըլըմ, թափ տալի։ Ըրեխեքը վրա են դառնըմ թե հվաքեն, ֆորն են դառնըմ։
Հերն ասըմ ա.— Ձունձը տվեք՝ ձեզ հանեմ։
Ձունձը տալիս են, ինքը մի ջղացաքար ա բերըմ, գձըմ ֆորի բերանը, նրանց թաղըմ ա, ինքը գնըմ ա։
Մի իրեք օր էն ձնձի հետ վեր դառած խնձորիցն ուտըմ են, եղնա սովըմ են։
Էրկու վենձն ասըմ են.— Էկեք մեր պուճուր քվերն ուտենք։
Ասըմ ա.— Ինձ ուտիլ մեք, ես էնքան կփորեմ, որ բան կգդնիմ, ձեզ կտամ՝ կուտեք։
Էնա մատով փորըմ ա, փորըմ ա, ցորեն ա գդնըմ, գարի յա գդնըմ, տալիս ա իրանց՝ ուտըմ են, ինքը մատը լիզըմ ա։ Մին էլ փորըմ ա, մի էդար կտուր ա բաց ըլըմ (ձեռքով մեծությունը ցույց է տալիս)[1] տենըմ ա էրկու ձի կապած, աղաքը խուրմեն լիքը։ Փեշեփեշ կրըմ ա, տանըմ ա քվորտանցը պիրմ։
Նոքարնին գնըմ են թաքավորին ասըմ են, թե.— Թաքավորն ապրած կենա, ձիաննուն ինչդա խուրմա ենք տալիս, բան չեն դառնըմ, կտուրը կալած, դուռը կալած, գիդենք ոչ էդ ինչն ա ուտըմ։
Ասըմ ա.— Փասարը պիեցեք՝ գդեք։
Գնըմ են խուրմեն ձիանու աղաքն ածըմ, փասարը պիրմ են, հլե մին էլ տենըմ են մի հուր ու մալաք ախչիկ դուս էկավ, խուրմեն փեչը լցրուց։ Գնըմ են ու բռնըմ։
Ասըմ ա.— Ես քվորտինք ունիմ, յավաշեք նրանց էլ բերեմ։
Գնըմ ա բերըմ, տանըմ են թաքավորի կուշտը։ Թաքվորն էն պուճուրին ա ուզըմ, էն էրկուսին էլ իրա նազբրնուն ա տալի։
Հարցնըմ ա.— Ի՞նչ շնորք ունիք։
Էն վենձն ասըմ ա.— Ես հենց խալիչա կգործեմ, որ քու ղոշունը վրեն նստի, կեսն էլ ծալած մնա։
Էն միչնեկն էլ ասըմ ա.— Ես էլ մի ձվից էն թավուր ձվաձեղ կանեմ, որ քու ղոշունն ուտե, կեսն էլ մնա։
Էն նաչար պուճուրն էլ ասըմ ա.— Ես դրանք գիդեմ ոչ, հմա մի տարեն վրա մի ոսկե քանքուլավոր տղա կբերեմ։ Էնա տարեն վրա բերըմ ա։

[1] Ծանոթությունը բանահավաքինն է.—Ծ. Կ.։

Նա որ բերրմ ա, քվորտինքը չաթ ու բողազ են ըլրմ, չունքի իրանցը սուտ էր։ Էնա գնրմ են տատմորը փող են տալի, ասրմ են.— Տար դրան կլոլե, բեթարափ արա, մեր շունը վեր ա տվել, էրկու լակոտ տար գձե դոշը, թող ծծեն։
Տհենց են անրմ։
Խաբարը թաքավորին ա հասնրմ, ասրմ ա.— Գնացեք դռան տակին մի ֆոր փորեցեք, դոշիցը հետ միջին դրեք, թուլենին թող ծծեն, կրծեն, ման գան, կրծեն՝ ման գան, անց կենողն էլ վրեն թքե։
Էն քյավթառն էլ տանրմ ա էն ըրեխին փթաթորրմ ա, ջղացի ցոթոնն ա գձրմ։
Ջղացպանին ջիրմ ա, տանրմ ա ասրմ ա.— Այ կնիկ, մի սիրան ըրեխա եմ գդել։
Էնա ուրախանրմ են, մի էծ են ունենրմ, իծի կաթով պիրմ են։ Էն ըրեխեն էլ ով տարով ա վենձանրմ, նա՝ օրով ա վենձանրմ, մի օխտը տարեկան ա դառնրմ, իմաստուն տղա յա դառնրմ։
Թաքավորն ասրմ ա.— Բա ես թաքավորն ըլիմ, բա իմ կնիկը շան լակոտնի բերե՞, թող չիմն էլ ըրեսին թքեն, բալքի սիրտը ճաքի, ինքն էլա մեռնի։
Թաքավորը վենձ պատրաստութին ա տենրմ, տունը մինը կանչրմ ա, որ գան կնգա ըրեսին թքեն, եդո գան հաց ուտեն— գնան։ Էնա չիմն էլ գալիս են թքրմ, անց են կենրմ, էն իրան տղեն, որ գալիս ա անց կենրմ հա, թքրմ չի։
Ասրմ են.— Թքե, թքե. թքրմ չի. որ շատ ասրմ են հա, ասրմ ա.— Թուքը թքողանց, մուրը մրողանց, ես ո՞՛նց թքեմ իմ ծնողանց։
Էնա ըտի անգաճ են դնրմ, ասրմ են.— Բա էդ ո՞նց ա, ինչ ա։
Ասրմ ա.— Բա, սա իմ մերն ա, իրա խոսկի տերն ա էլել, իմ մոքիրնին չաթ ու բողազ էն էլել, քավթառին ասել են, ինձ տարել ա գձել ջղացի ցոթոնը, թուլենին են մորս դոշը գձել, ջղացպանն էլ ինձ պիել ա։
Էնա նոր կանչրմ են քվորտանց մարթկերանցը, ասրմ են, ու էն քավթառին ու էն քվորտանցը ձիանու պոչիցը կապրմ են, քաշ տալի, վենձ թիքեն անգաճն են թողրմ։ Նոր էն նաչարին ընդիյան հանրմ են, թամզրմ են, լեղացնրմ, կնքրմ են, նոր թաքավորի հետ մարթ ու կնիկ են ըլրմ։ Էն ջղացպանին էլ մի բոլ ոսկի են տալի, պատվրմ են, ճամփու դնրմ։ Պրծնիս ամեն ցավից-չոռից, ինչ պրծնրմ են։